

3756



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

« 01 » 04 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 087 - 25

Նախաձեռնող՝

**Քաղաքացի Արամ Արամյան**

ք. Երևան, Հանրապետության փողոց, 71 շ.

Գործունեությունը՝

**Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 10/1 հողամասում առևտրի սրահի կառուցում**  
Արարապի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 087 - 25

« 01 » սեպտեմբեր 2025թ.

**Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 10/1 հողամասում առևտրի սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Քաղաքացի Արամ Արամյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Այնթապ բնակավայր

**Ներածական մաս.** Համաձայն քաղաքացի Արամ Արամյանի կողմից ներկայացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 10/1 հողամասում նախատեսվում է առևտրի սրահի կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մասիս համայնքապետարանի կողմից տրամադրված 2023թ. նոյեմբերի 15-ի N CPP0-0000-9743 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 03-012-0238-0018) 0.45 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Առևտրի սրահի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ գյուղի վարչական տարածքում՝ համանուն բնակավայրի հյուսիս-արևմտյան մատույցներում, Երևան-Մեղրի մայրուղուց անմիջապես ձախ: Տարածքը կառուցապատված չէ: Տարածքին բնորոշ է չորասեր, տափաստանային բուսածածկույթը: Տարածքի եզրագծով առկա են 5 ծառ, որոնք չեն հատվելու: Կից գտնվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, Մ2 միջպետական նշանակության ճանապարհ (առևտրի սրահի և մայրուղու միջև հեռավորությունը 32 մ), ինժեներական գծեր, հաղորդակցողիներ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքներ՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:

Համաձայն երկրաբանական հետազոտությունների արդյունքների՝ գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է: Բարցարձակ նիշերը տատանվում են 839.0-849.0 մ սահմաններում: Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լճագետային նստվածքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դեյուվիալ-էյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով՝ ներկայացված կավային գրունտներով: Տարածքում առկա է հողաբուսական շերտ՝ 0.0-0.40մ հզորությամբ ավազակավի, կավավազի լցնումով: Ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 15 մ խորը հորիզոններում: Տարածքը գտնվում է տաք կլիմայական շրջանում: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում, գրունտների արագացման առավելագույն մեծությունը՝  $A_{max}=0.3g$ : Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են: Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Համաձայն հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գնահատական-եզրակացության՝ պատմամշակութային միավորներ չեն փաստագրվել: ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսա-կենդանատեսակներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքները բացակայում են:

Համաձայն նախագծային փաստաթղթի՝ կառուցվելու է առևտրի սրահ, պահեստ, նախասրահ, սանհանգույց և աշխատասենյակ:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի ընդհանուր մակերես - 4500 մ<sup>2</sup> (100%),
- ընդհանուր կառուցապատում - 3453.0 մ<sup>2</sup> (77 %), որից՝ սալվածք՝ 983.3 մ<sup>2</sup> (22 %),
- առևտրի սրահի կառուցապատման մակերես - 2469.7 մ<sup>2</sup>,
- հարկի մակերես - 2454.0 մ<sup>2</sup>, ընդհանուր հարկերի մակերես - 2662,9 մ<sup>2</sup>,
- կանաչապատման մակերես - 1047 մ<sup>2</sup> (23 %) և լրացուցիչ 94 մ<sup>2</sup> ծաղկանոց 570 հաս ծաղկամաններով տեղադրվելու են տարածքում,
- ավտոկայանատեղի - 50 մեքենա:

Համաձայն նախագծային լուծումների՝ առևտրի սրահի արտաքին առավելագույն չափերը կազմում են 81.20 x 31.09 մ: 0.00 նիշից առավելագույն բարձրությունը կազմում է 6.40 մ: Նախատեսվում է կառուցել առևտրի սրահ, պահեստ, նախասրահ, սանհանգույց, աշխատասենյակ, հաշմանդամների սանհանգույց, էլեկտրական վահանակի սենյակ, օժանդակ սենյակ և վերելակ: Հարկի բարձրությունը ամենացածր կետում 3.70 մ է, իսկ ամենաբարձր կետում 4.90 մ է: Առևտրի սրահը նախատեսվում է իրականացնել հավաքովի մետաղական կարկասով, որը պետք է պարփակվի մետաղական ջերմամեկուսիչ սալերով, իսկ ճակատային մասերում իրականացվելու է նաև ալյուկոբոնդով երեսպատում: Տանիքը երկթեք է, կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ, իրականացված մետաղական թիթեղներով:

Ջրամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին նախատեսվող գործունեության իրականացման համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Առևտրի սրահի ջեռուցումը նախատեսված է անհատական էլեկտրական տաքացուցիչներով: Գազամատակարարում չի նախատեսվում:

Առևտրի սրահն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտաձման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, ինչպես նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով (վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ և այլն):

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 24 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շինանյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում և այլն: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և գրաֆիկի:

Շինարարության ընթացքում որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որտեղ պահեստավորվելու են շինանյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներից օգտագործվելու են աշտարակային վերամբարձ կռունկ, ավտովերամբարձ կռունկ, բեռնատար, բուլդոզեր, ձեռքի գործիքներ և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների վանալու հարթակ:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, ավազ, բազալտ, տուֆ, սրբատաշ և կոպտատաշ քար, մետաղական թիթեղներ, ապակի, ներկ և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինհրապարակում անիվների վազումից և շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցով և լցվելու են բիոզուգարաններ: Բնական տեղումներից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1,1մ<sup>3</sup> չափերի պարզարան: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինհրապարակի ջրցանման և անիվների վազման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Կառուցապատման ժամանակ կատարվելու են 2860 մ<sup>3</sup> ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային գրունտը կպահպանվի տարածքում և կօգտագործվի տարածքի հարթեցման համար: Հողային աշխատանքների ժամանակ առաջանալու է 120 մ<sup>3</sup> ծավալով բերրի հող, որն գործող օրենսդրությամբ սահմանված կարգով պահվելու է տարածքում, հետո օգտագործվելու է կանաչապատման նպատակով:

Առաջանալու են շինարարական նյութերի մագորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 250 մ<sup>3</sup> ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 2400 կգ/տարի:



Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի Մասիսի համայնքի ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային լսում: Նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց բավարար չլինելու դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
2. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համայնքի հետ համաձայնեցված՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված բարեկարգման և կանաչապատման լուծումները:
3. Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
4. Թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մասիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Արամ Արամյանի կողմից ներկայացված՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ գյուղի Երևան-Մեղրի մայրուղի 10/1 հողամասում առևտրի սրահի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն»  
ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Լեւոն Մելիքյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան